հոն համակերպելով իր հայրագիր մեծ եղբօրը կամքին՝ կամուանանայ մեծ հանդէսով. 5-6 ամիսէն մեծ եղբայրն ալ՝ իր յորդորմամբը՝ Կ. Պոլիս կուգայ, և հոն մանի-ֆաթուրայի խնդրանքի ու մատուցումի երկուստեք ե-ռանդնոտ ստիպում մը՝ չո՛ւտ չո՛ւտ կընդարձակէ Մա-նուկեան եղբարց ախորժակներն և գործառնութիւնները, ու իրենց վարկ բացող թանգարները կըստիպեն ամէն շաբթու՝ անպայման եղանակով առնել իրենցմէ լայնա-վարկ և մեծաքանակ վաճառք։ Երանելի ժամանակք։

Այսպէս՝ Մանուկեանց գործն 1855-60ին կը հասնի նշանակելի մեծութեան, տարին 50-60000 ոսկիի գործ կը տեսնէին։ Գարակէօզեան Կարապետ՝ ժամանակին պատմայի հրապարակին Յովսէփն և մտերիմը Սենեքերիմ Մանուկեանի՝ աննախանձաբար կը հիանար իր ճարպիկ գործունէութեանց վրայ և խորհրդակից կըլլար անոր. իր գործակատարներն էին՝ Եաղըճեան Իբրեւ ծախող, Կ. Եղիազարեան ապա Մանուկ Արզեան՝ Իբր արկղակալ ու գրագիր։

Մանուկեան Սինեքերիմ կը գնէր ի Կ. Պոլիս՝ մա-նաւանդ պատմայի ճիւղը՝ Քափամաճեանց ալ հին տու-նէն. բայց ապա նկատելով որ անոնց տեսակները չեն կըրնար գոհացունել զինքն՝ անոնց վրայ ղրկեց ի Ման-չէսդրը Կարապետ Եղիազարեանը, և սկսաւ՝ Քափամա-ճեանց յանձնարարողէք տալով՝ ուղղակի Անգղիայէն իր անունին բերել վաճառք։ Ետքը բացաւ ալ ի Մանչէսդրը զատ տուն՝ ընդարձակելով և ևս իր Կ. Պոլիսի ու Կե-սարիայի[1] գործերն՝ ընկերութեամբ միշտ իր աւագ եղ-բարց և գլխաւոր գործնական վարիչն ինք ըլլալով ի Կ. Պոլիս, թէպէտ և սկիզբէն ալ իր եղբարցն ընկերութեամբ վաճառաշահած է անխափան։

---

[1] Բուն Կեսարիայի մէջ՝ վաղուց կային հայ վաճառականներ ու մեծ ազգատոհմներ, եւ 19դ դարուն սկիզբը նշանակելի էին հոն Կիւ-միւշեանք, Զարդարեանք, Պաշպազիրկեանեանք և այլք ոմանք. Սակայն չենք կըրնար ծածկել փորձառուներու վկայութիւնն ալ՝ թէ մասամբ Կե-սարացիք ու Ակընցիք բարքի կողմէն հաղորդարար ու պարզմիտ նկա-բագիր մը չեն ցուցած.